ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 փետրվարի 2019թ. թիվ 67-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-Ի ԹԻՎ 152-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. հոկտեմբերի 15-ի «Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների ու կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին» թիվ 1204-Ն որոշման պահանջների՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձ նշանակել ՀՀ Լոռու մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետի պաշտոնակատար Հրայր Հակոբյանին:

2. Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձին՝

1) Ապահովել «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով տեղեկատվություն տնօրինողի պարտականությունների իրականացումը:

2) Տեղեկատվություն փնտրողին մատչելի ձևով պարզաբանել տեղեկության տրամադրման կարգը, պայմանները և ձևերը:

3) Մշակել ստացված հարցումների վիճակագրական և ամփոփ տվյալները:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղարին:

4. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզպետի 2016թ. մայիսի 23-ի թիվ 152-Ա որոշումը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. փետրվարի 27
ք.Վանաձոր